## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
## ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

***«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/10» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին***

«03» հունվարի 2024թ. թիվ 1

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի և 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը և «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/10» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. նոյեմբերի 28-ի թիվ 4 արձանագրության 1.2.-րդ կետը

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/10» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | |
| անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ | 00522502 | - | «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի | - | - | «03» հունվարի 2024թ. թիվ 1 որոշում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/10» |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | կազմակերպման» կարգի 42-րդ կետով, մասնավորապես՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատաս խանությունները: | | | |

***Սույն որոշման հիմքում առկա («ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/10» ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող) բոլոր փաստաթղթերը հրապարակված են www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:***

3. Պատասխանատու ստորաբաժանմանը՝ ապահովել սույն որոշման տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ կայացման հաջորդող օրը:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ն. ԳԱԼՍՏՅԱՆ**